Ֆինանսական խորհրդատու - Զվարթնոց մասնաճյուղ

Աշխատանքի նկարագրություն

Բանկային պրոդուկտների ուղիղ և խաչաձև վաճառք, այդ թվում աշխատավարձային նախագծերի ներգրավում և որակյալ սպասարկում:

Աշխատանքային պարտականություններ

- Իրականացնում է մանրածախ վարկային, քարտային և փոքր բիզնեսի հաճախորդների ներգրավում, պահանջմունքների բացահայտում, ուղիղ և խաչաձև վաճառքներ՝ ՀԾ-Բանկ համակարգի կաղապարների օգտագործմամբ
- Իրականացնում է վարկային հայտերի ընդունում, ՀԾ-Բանկ համակարգում վարկի և գրավի ձևակերպում, վարկի տրամադրման կարգադրության ձևավորում, վարկային փաթեթների հավաքագրում
- Բացում, վերաթողարկում և փակում է պլաստիկ քարտերը
- Հաճախորդների և աշխատավարձային նախագծերի ներգրավման նպատակով՝ իրականացնում է պրեզենտացիաներ, մասնակցում է Բանկի կողմից կազմակերպվող BTL-ակցիաներին և «Բանկը աշխատավայրում» միջոցառումներին
- Կատարում է իր առջև դրված ամսական վաճառքների պլանները
- Կազմակերպում և իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքվող վարկային գործարքները
- Անհրաժեշտության դեպքում ապահովում է իր և այլ մասնաճյուղերի ֆինանսական խորհրդատուների և կառավարիչների փոխարինումը

Անհրաժեշտ պահանջներ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրության իմացություն
- Վերլուծական մտածողություն
- Հաղորդակցության հմտություններ
- Հայերենի գերազանց տիրապետում
- Ռուսերեն և/կամ անգլերեն լեզուների իմացություն

Դիմելու ընթացակարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@armbusinessbank.am հասցեին:

Վերջնաժամկետ՝ 06.10.2023թ.:

Խնդրում ենք նամակի թեմա (subject) դաշտը լրացնել նշելով պաշտոնը և Ձեր անուն, ազգանունը հետևյալ կերպ՝ "**Financial Advisor/Zvartnots Branch – Name, Surname**":